

**ՀԻՄՆԱԿԱՆ ՅԱՌԱԶԱԴԻՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ-  
ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ՈՒՂԲՆ**

«Աղդք և թագաւորք, որք Քեզ  
ոչ ծառայիցեն՝ կորիցեն, և աղդքն  
աւերելով աւերեսցին»

Եա. կ. 12.

Երբ աշխարհիս թէ քաղաքակիրթ և թէ կիսաքաղա-  
քակիրթ ազգերը բուռն ջանքերով ձգտում են յառաջա-  
դիմութեան, շատ կարեոր է այս հարցը տալ, թէ արդեօք  
այս բոլոր հոսանքները ունին մասնաւոր ուղղութիւն, որ  
ցոյց տայ մարդկային աղդի յառաջադիմութեան ճշմարիտ  
և միակ ուղին։ Բայց նախ քան այս, մի ուրիշ հարց էլ  
կայ, թէ որն է ամենից ցանկալի և ամենից օգտակար  
ուղին։

Այս հարցը շատ լուրջ է և կարեոր, որին կարելի է  
այլ և այլ պատասխաններ տալ և որոնցից մինը միայն  
կարելի է ճշմարիտ և օգտակար համարել։ Մարդկի կան,  
որոնք պնդում են շարունակ յամառաբար, թէ յառաջա-  
դիմութեան ամենից ցանկալին և օգտակարը քաղաքակըր-  
թութեան նիւթեական կոչուած արուեստների զարգացումն  
է։ Նետեսապէս երբ մարդ հպատակեցնէ բնութիւնը, երբ  
մեծապէս բազմանան երկաթուղիները, շոգենաւերը և  
հեռագրաթելերը և ամեն կարգի ու տեսակի հնարազի-  
տութիւնները, երբ ծաղկի վաճառականութիւնը և բազ-  
մանան մարդկային պիտոյքները գոհացնելու միջոցները,  
և այլն և այլն, մարդիկ աւելի քան պէտք է զգան, թէ ի-  
րարուց կախումն ունին և հանրային շահի եղբայրութեամբ  
պէտք է կապուեն միմեանց հետ և այս յառաջադիմու-  
թամամբ պէտք է հասնեն քաղաքակըրթութեան բարձրա-

դոյն զարդացման։ Այս խօսքերն ու դատողութիւններն են լուսում այսօր շատ շատերից։

Մէ հարց, թէ արդեօք նիւթական յառաջադիմութեան այս արուեստները ունին ինքնին վերածնութեան գօրութիւն և կարող են մշտնշենաւորել իրենց գոյութիւնը իրենց իսկ գօրութեամբ։ Անհամար օրինակներ կան պատմութեան մէջ, որոնք ցոյց են տալիս ակներև կերպով, թէ այս արուեստները իրենց պահպանելու համար բացի իրենց գօրութիւնից ուրիշ մի գօրութիւն չունենալով դատապարտուել են ոչնչացման։ Ուր են այն արուեստները, որոնք կառուցին աշխարհիս հրաշալիք համարուած մեծ բուրգը՝ մարդկային շինուածքների հնագոյնը։ Սկզբայի արքունական աստղաբաշխը, որ ամիսներ վատնեց նրան ուսումնասիրելու և չափելու համար, իրեն օժանդակ ունենալով Եւրոպական և Ամերիկական ամենից լաւագոյն և կատարելագործուած գործիքները, յայտարարեց, թէ այդ շինուածքի կառուցիչները ճշդութեան մէջ իր գործիքներին գերազանցող գործիքներ են ունեցել։

Սսկայում այսպիսի վայրեր կան, որոնց բնակիչները այժմ վագրներից աղատ մնալու համար ծառերի ամենաբարձր ճիւղերի վերայ են բնակւում, բայց նոյն իսկ այդ բարբարոսացած վայրերում գտնուել են ընդարձակ և ոլրնազարդ բնակարաններ, որոնց կառուցել են այդ ծառաբնակների նախահայրերը։

Զինացիք այժմ չեն կարող արտադրել այն գեղեցիկ գոյները, որոնց նախկին դարերում ի ցոյց բերին իրենց յախճապակեայ անօթների վերայ և այն արծաթայուռ պղնձէ արձանները, որոնց երբեմն յօրինում էին այնքան կատարելութեամբ։

Ուրեմն մեծ սխալ է կարծել, թէ մարդկային ընկերութեան մէջ գոյութիւն ունի մի գօրութիւն, ուրը ինքնին և իր իսկ բարեշրջման միջոցով կարող է մշտնշենական աճումն ունենալ։

Մենք գոռողանում և մեծամտում ենք մեր պիտանի արուեստների և ժամանակիս հնարագիտութեան և ճար-

տարարուեստների յաղթանակների վերայ և կան մարդիկ, որոնք երեակայում են, թէ սրանք ամենաբաւական բարիքներ են, բայց կարող են արդեօք այդ մարդիկը երաշխաւորել դրանց մշտնշենաւորութեան համար: Հետեապէս մեր նիւթական պիտոյքների զարգացումը չի կարող հիմնաւոր և ճշմարիտ յառաջադիմութեան հասցնել մեզ: Իրողութիւնը ցոյց է տալիս, որ նոզեկան մի մղումն է այն, որ առաջ է բերում ամեն բարիք և առաջ է վարում մարդկանց նիւթական յառաջադիմութեան մէջ: Եթէ այս մղումը չը հայթայթուի և կենդանի չը պահուի, ոչ արուեստները կարող են պահպանուել, ոչ էլ, եթէ ոչնչանան, կարող են վերստին նորոգուել:

Արդեօք նիւթական յառաջադիմութիւնը կարող է երբ և իցէ ստեղծել այդ հոգեկան մղումը, ընդհակառակը նիւթական յառաջադիմութիւնը այդ մղումից է ստեղծում: Ուրեմն նիւթական յառաջադիմութեամբ չենք կարող հասնել բարձրագոյն քաղաքակրթութեան և հիմնական ու ճշմարիտ յառաջադիմութեան ցանկալի վիճակին:

Փորձենք փնտոել մարդկութեան այդ մեծագոյն բարիքը մտաւորական զարգացման վիճակի մէջ, թէ մտաւոր զարգացումը կարող է ընծայել մեզ այդ բարիքը: Մարդիկ կան, որոնք առարկում են, թէ տգիտութիւնն է աղքիւր բոլոր դժուարութիւնների, որոնց դարմանն է միայն գիտութիւնը: Այս կարգի մարդկանց սովորական գոռում գոչումն է, կրթեցէք մարդկանց, բացէք գիտութեան տաճարների գոները և հրաւէր կարդացէք մարդկութեան, գիտութեան լայնարձակ սանդուխտներից բարձրանալու դէպի վեր, դէպի բարձրագոյն վիճակ:

Անտարակոյս ոչինչ չի կարելի ասել գիտութեան դէմ և նրա օգտակարութիւնը ոչ ոք չի կարող ժխտել: Տգիտութիւնն է միայն, որ անարգում է գիտութիւնը, բայց երբ նպատակ ունենք ստանալու մարդկանց համար ճշմարիտ և բարձրագոյն բարիք, մեր ճանապարհի վերայ հանդիպում ենք այնպիսի դժուարութիւնների, որոնց չի կարող վերացնել գիտութիւնը և հարկ չը կայ երկար ու

ընդարձակ լուսաբանելու այն իրողութիւնը, թէ գիտութիւնն անգամ, նման նիւթական յառաջադիմութեան չի կարող նոյն իսկ ինքն իրեն մշտնջենաւորել:

Պատմութիւնը լի է օրինակներով, որոնք ցոյց են տալիս, թէ ուսում, գրականութիւն, արուեստներ և քաղաքակրթութիւնունեցել են անկում: Բացի արանից, գիտութեան զարգացումը և մտքի մշակութիւնը չեն կարող մարդուս ամենաբարձր բարիքը լինել, որովհեաւ այս բարիքից ամենից կատարեալը միայն նրանք կարող են ձեռք բերել, որոնք ամեն բան թողնելով, իրենք իրենց նույնում են գիտութեան հետամուտ լինելու: Հետեւապէս շատ քիչերը պէտք է կարողանան ստանալ այս բարիքը իր կատարելութեամբ և մարդկային ազգի մեծագոյն մասը երբէք չի կարող վայելել այն:

Մարդկային կեանքի պիտոյքները պահանջել են և միշտ էլ պէտք է պահանջեն, որ մարդկանց մեծագոյն մասը գիտական մարդկանցից շատ տարբեր զբաղմունքներ ունենայ, իսկ ճշմարիտ բարիքը, շատ պարզ է, որ պէտք է լինի, ինչ որ ամեն մարդ կարող է ստանալ: Մի բարիք, որ իր ընութիւնից միայն մարդկային ազգի մի փոքրիկ մասին կարող է մատակարարել, չի կարող առաջարկուել մարդկային յառաջադիմութեան իբրև ամենից ցանկալի և ամենից օգտակար միջոցը:

Բայց զեռ ևս մնում է մի ուրիշ ծանրագոյն դժուարութիւն էլ: Ամեն մարդ անկասկած ընդունում է, որ մարդկային կեանքի գոհացուցիչ մի վիճակ չի կարող առաջ դալ առանց առաքինութեան: Այն ընկերական վիճակը, որ զուրկ է ուղղութիւնից և մաքրութիւնից, չի կարող յարմար տիպար լինել, որին նմանելու հրաւէր կարդացուի ամենքին, թէկուզ այդ ընկերական վիճակը նիւթական և մտաւորական յառաջադիմութեան ամենաբարձր կատարին հասած լինի: Մի որ և է բարիք չի կարող անաղարտ մնալ բարոյական վատթարութեան և բարուց ու վարուց ապահանութեան մէջ: Նիբուր մեծանուն պատմաբանը ասում

է, թէ «Ամեն մի կորչող ազգ իր կրօստեան թոյնը միշտ իր բարոյական ապականութեամբ է պատրաստել»:

Կարող ենք հաստատապէս տաել, թէ մարդիկ, եթէ ի մօտոյ ծանօթանան և դիտեն իրողութիւնները, անշուշտ պէտք է համոզուեն, թէ սոսկ մտաւոր կրթութիւնը չի կարող յագեցնել մարդկանց ամենակարևոր պահանջը, ու բովինետե առաքինութիւնը ապահովելու համար անզօր է, և չի կարող լինել հզօր պատուար ընդդէմ մոլութեան, որի ճշտութեան համար պատմական իրողութիւնները այնքան յատակաբար յայտարարում են: Բազմաթիւ օրինակներ կան պատմութեան մէջ, որոնք ակներև կերպով ցոյց են տալիս, թէ սոսկ մտաւոր կրթութիւնը անբաւական է եղել մարդկանց մէջ բարոյական զարգացում գոյացնելու կամ ապականեալ ընկերութեան աւերիչ ազգեցութեան դիմադրելու:

Ցիս Աթէնքը: Թերես եղած չէ մի ժողովուրդ, որ հասած լինի այն փայլուն և բարձր կրթութեան, որին հասած էին Աթենացիք Պէրիկլէսի օրերում, երբ կրթութիւնը այն աստիճան տարածուած էր, որ հասարակ ժողովրդն անգամ փիլիսոփայութեան ուսանող և արուեստի հմուտ քննադատ էր: Այսօր չը կայ մի քաղաք, ուր պատկերահանը կամ արձանագործը իր արուեստի գործերը հասարակ ժողովրդին ներկայացնէ նրա դատողութիւնն ու կարծիքը իմանալու և այդ դատողութեան ու կարծիքի առաջ խոնարհուելու, բայց այս բանը գրեթէ ամեն օր պատահում էր Աթէնքում: Ըստ Թանտոփոնի պատմութեան, գարբինները, խաղախորդները և հնակարկատները հաւաքւում էին լսելու փիլիսոփաների վիճարանութիւնները և նոյն իսկ գեղարուեստի ամենից նշանաւոր գործերի արժանիքի վերայ վճիռներ էին արձակում: Բայց այս զարմանալի մատաւոր զարգացումը, որ կատարելութեան մէջ իր հաւասարը ունեցած չէ, ժողովրդի հոգին թմրած էր և գիտութիւնը չնշին զօրութիւն անգամ ցոյց շը տուեց մաքրելու ժողովրդի վարք ու բարքը: Ոչ առաքինութիւնը պաղաքերեց և ոչ էլ մոլութիւնը սանձահարեց:

Նրանք, որոնք հմուտ են պատմութեան, պէտք է դանեն սրա նման բազմաթիւ իրողութիւններ, որոնք սովորցնում են մեզ, որ եթէ մտաւոր մշակութիւնից աւելի բարձր մի միջոց չունենանք, որին ձգտել և հասնել ճզգնենք, մարդկային հիմնական յառաջադիմութեան և բարձրագոյն քաղաքակրթութեան համար մեր տածած յոյսերը ընդունայն են: Հետևապէս բարձրագոյն և հզօրագոյն գործիքը չը պէտք է փնտռել գիտութեան և մտաւոր զարգացման շնորհիւ առաջ եկած առաքինութեան մէջ:

Ըստունելով, որ առանց բարոյական անարատութեան գոհացուցիչ վիճակ չի կարող առաջ գալ, կարելի՞ է արդեօք մարդկանց անարատ դարձնել միայն բարոյականութեան կանոնները նրանց սովորցնելով: Եթէ քննենք մարդկային բնութիւնը և ուսումնասիրենք պատմութիւնը, պէտք է համոզուենք, որ այս տեսակ բոլոր ջանքերն ու աշխատութիւնները անյաջող են անցել: Բարոյական կանոնները աւանդելը երբէք ինքնին առաքինութիւն չեն կարող ստեղծել և այս իրողութիւնը լի ու լի հաստատում են պատմական փաստերը: Մենք սխալվում ենք, երբ կարծում ենք, թէ որովհետև մարդիկ պարտաւոր են առաքինաբար գործել, պէտք է գործեն, եթէ միայն կարողանան պայծառապէս տեսնել իրենց պարտաւորութիւնը: Բայց հակառակ՝ այս հայեցողութեան պարզ եղելութիւնը այն է, որ մարդիկ՝ տեսնում են այդ պարտաւորութիւնը և միշտ էլ տեսած են և սակայն չեն կատարում: Ոչ ոք պէտք չունի սովորելու, թէ պարտաւոր է ուղղութիւն գործել: ամեն մարդ ինքնին գիտէ այդ, և որքան անզօր են ուրիշների հրահանգութիւնները, երբ բաղդադում ենք այդ հրահանգութիւնները այն անմեռ ձայնի զօրութեան և վսեմութեան հետ, որ ամեն մի մարդու հոգու խորքերի մէջ յաւէրժարաբար հոչակում է մարդկային պարտաւորութիւնը: Ուրեմն մի մեծագոյն դժուարութիւնն էլ այն է, որ մարդիկ չեն ուզում կատարել իրենց պարտաւորութիւնը ճանաչելով հանդերձ այն:

Սոկրատէսը ակներև մի օրինակ է տալիս լոկ հրահանգութեան եղանակի անյաջողութեան նկատմամբ։ Այս մեծ իմաստասէրը զօրաւոր համոզմունք ունէր, թէ մարդկանց առաքինութեան մէջ հրահանգելով բաւական է նրանց առաքինի դարձնել։

Հնարաւոր է առաքինութիւն սովորցնել, այս էր ահա իր հռչակաւոր նշանաբանը, որը իր բոլոր աշխատութիւնների հիմքը դարձաւ երեսուն տարի։ Իր սիրելի առաքինութեան նիւթի վերայ խօսում էր և հրահանգում էր շարունակ Աթէնքի փողոցներում և կրպակներում։ Բայց կայ արդեօք մի որ և է ապացոյց, որ Սոկրատէսի բոլոր այս հսկայական ջանքերից ամենադոյզն բարոյական գարգացում տեղի ունեցած լինի այն վատթար ժամանակներին։

Եղիբրիադէսը, որ Սոկրատէսի ամենից մտերիմ և ամենից ուշադիր աշակերտներից մէկն էր և ենթարկուած էր Սոկրատէսի բոլոր բարեկարգիչ ազդեցութեան, մնաց միշտ մի և նոյն ցոփակեացն ու անսառակը։ Հետևապէս բարոյականի դասաւանդութիւնը առանց մի ուրիշ գերազանցագոյն զօրութեան ազդեցութեան երբէք խոր տպաւորութիւն չի արել ընկերութեան մէջ և չի տարածուել ընդարձակօրէն մարդկային խորհուրդների և գործերի մէջ և երբէք չի կարողացել մարդկային ընկերութեան կեանքի ներքին և կենտրոնական բարեկարգութիւն առաջ բերել։ Մեր պատմական հմտութիւնը շատ անձուկ և մարդկային սրտի վերայ մեր ունեցած ծանօթութիւնը խիստ ծանծաղ եղած կը լինի, եթէ դեռ ևս սովորած չենք, թէ առաքինութեան համար սոսկ գիտութիւնը և մտաւոր մշակութիւնը բաւական չէ և կեանքի համար բացի լոյսից կարօտում են մարդիկ ուրիշ բանի էլ։

Հետևապէս ամեն մարդ, որ վնտուում է իր բարիքը և կամ մարդկային սեռի բարձրագոյն բարօրութիւնը, անտարակոյս պէտք է ցանկանայ, որ մարդու հոգու և սրտի խորքերում և նրա կենտրոնում բացուի մաքրութեան ազդիւր և այդ աղքիւրը ունենայ անսպառ ճոխութիւն

կեանքի ինքնաբուղիս ջրերով։ Բայց այսպիսի մի կատարեալ կեանք Աստուածային զօրութեամբ հնարաւոր է միայն, և այդ կեանքը արտագրելու և պահպանելու համար կրօնական աղբիւր է հարկաւոր։

Ահա այս է պատճառը, որ մարդկային ստուար մեծամասնութիւնը կրօնը անհրաժեշտ է համարել մարդկութեան բարձրագոյն բարերաստութեան համար։ Հետևապէս ոչ նիւթական յաջողութիւն, ոչ մտաւոր կրթութիւն և ոչ էլ առաքինութեան դասեր և հրահանգներ չեն կարող լիու լի և կատարեալ երջանկութիւն տալ մարդկանց։

Կրօնների մէջ երկու տեսակ կրօն կայ, մէկը սկսւում է մարդուց և հաղորդակցում է Աստուծոյ հետ մարդկային ջանքերով։ Այս կրօնը ունի բազմաթիւ ճիւղեր թէ հեթանոս և թէ նոյն իսկ քրիստոնեայ ազգերի մէջ։ Սրանք բոլորն էլ միացած են մի մասնաւոր յատկանիշով, այն է՝ փնտուել Աստուած մարդկային մտքի հնարած ճանապարհով։ Աստուած գտնելու գաղափարը ինքնին վսեմ է, թէպէտ այդ գաղափարը ի տես բերող ձեւերն ու եղանակները ուղղի շրմինին, որոնք չեն կարողացել անմեռ մղում տալ ընկերական կեանքին և մշտնջենական ներշնչում մարդկային հոգուն։

Քրիստոնէական կրօնի բուն տարբերութիւնը այն է, որ սկսւում է Աստուածայնով և Աստուածային եղանակով փնտուում է մարդուն։ Աստուածաշաղունչն էլ այս վարդապետութեամբ է տարբերուում ուրիշ բոլոր գրքերից։ Ուրիշ բոլոր կրօնական դրութիւնների մէջ չըկայ ամենեին մի վարդապետութիւն նման քրիստոնէական վարդապետութեան, որ յայտնում է մեզ, թէ Աստուած ինքը ողորմեց մարդուն և փրկութեան ճանապարհը ինքը պատրաստեց նրա համար։

Մինչ Աստուծոյ արդարութեան գաղափարը ընդհանրական է և ամենուրեք գտնվում է մեղքերից քաւուելու գաղափարը, միայն Աստուածաշաղունչի մէջն է, որ Աստուածային արդարութիւնը սիրով ճառագայթաւորուած մեղքի թողութեան համար մի այնպիսի զոհ է տալիս, որը Աս-

տուած Ինքն է պատրաստել և իր գործն է և ոչ թէ մարդկանց գործը Քրիստոնէական կրօնը ծանուցանում է մեղմի փրկութիւն, որ Աստուած Ինքը պատրաստելով մատուցել է մարդկանց, ոչ թէ իրենց արժանաւորութեան, այլ Աստուածային ողորմութեան վերայ հիմուած։ Աստուած Ինքը գալիս է յանձին Քրիստոսի և իր սէրը նուիրում է մարդկանց, որպէս զի մարդս մօտենալով Աստուածուն՝ բարեկարգուի և հասնի մի ճշմարիտ և երջանկաբեր բարձրութեան։

Ահա այս կենդանարար սերմից պէտք է ուռնանայ և հետզհետէ զարդանայ անհատի կատարեալ կեանքը և ընկերական կատարեալ վիճակը։ Անհատական կատարելութեան բոլոր պահանջները կարող են կատարուել այն հոգու մէջ, ուր ամեն պարտականութիւն և ամեն բարոյական կանոն ներկայանում են իրեն կամք այն սիրեցեալ Տիրոջ, որի սիրոյ մէջ մարդու հոգին գտնում է իր կեանքը և որին ծառայելով ցնծում է այն կատարեալ սիրոյ ազատութեամբ, որ վանում է ամեն երկիւղ։

Կատարեալ ընկերական վիճակն էլ գոյութիւն կունենայ այն դէպքում, երբ ընկերութիւնը այս Աստուածային ներշնչմամբ բոցավառուած՝ կապակցուած կը լինի այն սիրով, որ չի վնատում իրենը և երբ անհատական սրաերի սիրոյ և մաքրութեան նոր կեանքը ամեն տեղ խաղաղութիւն և հաճութիւն կը գործէ։

Այս օրհնեալ կրօնին մարդիկ ինչ աստիճանով հպատակուեն, ճիշտ նոյն աստիճանով էլ գործնականապէս փառաւոր արդիւնքներ պէտք է առաջ բերէ նրանց մէջ։ Եթէ միայն քրիստոնէութիւնը ընդունուէր ամեն տեղ, եթէ բոլոր մարդիկ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ, հնազանդ և հարազատ աշակերաներ լինէին, անպայման պէտք է դադարէին պատերազմները, այլ ևս գոյութիւն չը պէաք է ունենային հարստահարութիւններն ու գերութիւնները, ամեն տևակ ոճիրներ և մոլութիւններ պէտք է անհետանային և ընդհանրական սէր, մաքրութիւն և խաղաղութիւն պէտք է տիրապետէր ամբողջ աշխարհի վերայ և այս բո-

լորի հետ նաև պէտք է անէին և բազմանային մարդիկ քրիստոնէական բարոյականի շնորհիւ, բայ Ես. մրգ. թէ՛ մէս ոչ ևս լուիցի անիբաւութիւն յերկրի քում, և ոչ բեկումն և թշուառութիւն ի սահմանս բայ Եւ ժողովուրդը քո ամեննեին արդար և յաւանեանս ժառանգեացեն պերկիր: Եւ սակաւուրին հազարաւոր եղիցի և կրտսերն յազդ մեծ է:

Եւ այն հոգեկան կեանքը, որ պէտք է առաջ բերէ քրիստոնէական կրօնը, մշտնջենական մզում պէտք է առյ նաև մտաւորական բոլոր զարգացման և ճարտարարուեամական բոլոր գործունէութեան: Ոչ թէ միայն արդարութիւն, սէր և խաղաղութիւն, այլ և զիտութիւն պէտք է բղխէ ըովանդակ երկրագնդի վերայ, ումայի և անքերը վայրերը պէտք է ցնծան նրանով և անսակաւը պէտք է խնդայ և ծաղկի հասաւէտ և զեղեցկագոյն վարդի նման: Եթէ զեռ մենք հաւատք ունենք Եւրոպայի և Ամերիկայի բազարակրթութիւնների վերայ, պատճառն այն է, որ հաւատք ունինք, թէ քրիստոնէական կրօնի մշտկութիւնը և զարգացումն ու յարգանքը խոր արմատներ է զրել նրանց մէջ: Յաւալի է, որ մեր մէջ հետզհետէ զզալի շափերով վերանում Են քրիստոնէական կրօնի բարոյականի բարձրացուցիչ և ազնուացուցիչ սկզբունքները և որ առաւել ցաւալի է և մեծ գժրացութիւն, այս զրութեան մէջն ենք տեսնում Եւրոպական բազարակրթութեան յատկութիւնները: Ըսդհակառակը այս զիտութիւնը իրօք մի ահարկու վրանով է, որ ճշմարիտ քազարակրթութեան և հիմնական յառաջադիմութեան կործանումն է սպառնում:

Երբ մի ժողովուրդ լրում է քրիստոնէական հաւատքը և սրա տեղ Եւրոպական բազարակրթութեան միայն արտաքին կեղենն է ընդունում, անխուսափելի է դարձնում իր բարոյական անկումը: Հետեապէս ինչ որ ամենից կարենը է շեշտելու, այդ քրիստոնէական կրօնի այն ազդեցութիւնն է, որով Եւրոպական և Ամերիկական ազգերը մարտելով ապականիչ և աւերիչ բազարակրթութեան դէմ, անխախտ հաւատք ունին Աստուծոյ և արդարութեան

յաւիտենական սկզբունքների վերայ։ Ըսդունում են, թէ քրիստոնէական կրօնը և նորա քարոզած վարդապետութիւնն է ձշմարիտ հիմքը մարդկային ընկերութեան կատարելութեան, որը զնահատում է մարդկային արժանապատութեան արժեքը և խնդութեամբ սղջունում է մարդկային իմացականութեան զարդացման նորանոր յաղթանակները զիտութեան բոլոր օգտակար ձիւղերի մէջ։

Ամեն մի խելացի, բանիմաց և հայրենասէրն ու մարդասէրը այն ժամանակ միայն կարող է զո՞յ լինել, եթի ջանայ ամեն կերպ, ըերել իր ազգը և համայն ազգերը և միանգամայն ամեն մի սիրու լինդ կենդանարար իշխանութեամբ Յիսուսի Քրիստոսի և Նորա փրկարար և մարդկային սեռը իրապէս և ձշմարտապէս բարձրացնող և ազնուացնող Աւտարանի վարդապետութեան աննման ձշմարտութիւնների։

Եւ ահա այս է մարդկային սեռի բարձրագոյն քաղաքակրթութեան և հիմնական յառաջարիմութեան միակ ուղին, մի անդամ էլ կրթնելով մարդարէի խօսքերը, թէ ռԱզգը և թաղաւորք, որք Թեղ ոչ ծառայիցեն՝ կորիցեն, և ազգըն աւելինելով աւելիսցին, հրաւիրելով նաև մեր ազգայինների խորին ուշադրութիւնը այս ամենից կարենը խնդրի վերայ։

Առու Եղիսկոպոս